16.09.2026թ.
Հաստատում եմ տնօրեն՝
_____ Է. Նանյան

ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻ ԳՆԱՀԱՏՄԱ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ
No 13/666/26

ՀՀ քաղաք Երևան, Շենգավիթ Վերին Շենգավիթ 2 փողոց 20/1 շենք 43 հասցեում գտնվող բնակարանի շուկայական արժեքի վերաբերյալ:

Սույն հաշվետվությունը կազմված է <<Գնահատման գործունեության մասին>> ՀՀ օրենքի և ՀՀ կառավարության 2022 թվականի օգոստոսի 24-ի թիվ 1355-Ն որոշմամբ հաստատված անշարժ գույքի գնահատման ստանդարտի (այսուհետ ստանդարտ) պահանջներին համապատասխան:

Հաշվետվությունը կազմված է 32 /երեսունվեց/ էջից:

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ՝ ՀԿԱԾ Մալաթիա-Սեբաստիա և Շենգավիթ վարչական շրջանների բաժին

ԳՆԱՀԱՏՈՂ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ՝ <<Արմէքսպերտիզա>> ՍՊԸ
375626 ք.Երևան, Գ. Նժդեհ 26
ՀՎՀՀ 02231188
Հ/հ 2473602278770000 Արդշինբանկ
Հեռ. 043-06-19-19

Հայաստանի Հանրապետություն

ԵՐԵՎԱՆ 2026

Գնահատող

Բովանդակություն

1. Գնահատման առաջադրանքը.....3
2. Գնահատման նպատակով ներկայացված փաստաթղթերի ցանկ.....3
3. Գնահատման պատվիրատուն և հիմքը.....3
4. Գնահատվող օբյեկտը, նույնականացման տվյալները և գնահատվող օբյեկտի
Նկատմամբ իրավունքների տեսակը.....3
5. Գնահատման նպատակը (գնահատման գործառույթը).....3
6. Գնահատման ամսաթվերը.....6
7. Հաշվետվության ձևը.....6
8. Գնահատման աշխատանքների ընթացակարգը.....6
9. Գնահատվող օբյեկտի համառոտ նկարագրությունը.....7
10. Գնահատվող գույքի լուսանկարներ.....9
11. Օգտագործված փաստաթղթեր.....12
12. Առավել արդյունավետ օգտագործում.....15
13. Գնահատման մոտեցումների (մեթոդների) ընտրությունը.....15
14. Շուկայական արժեքի հաշվարկ համեմատական մեթոդով.....19
15. Շուկայական արժեքի հաշվարկ եկամտային մոտեցմամբ.....23
16. Եզրակացություն գնահատման առարկայի շուկայական արժեքի վերաբերյալ.....29
17. Սահմանափակումներ և հատուկ պայմաններ.....30
18. Օգտագործված գրականություն.....31

Գնահատող

1. Գնահատման առաջադրանքը

ՀՀ քաղաք Երևան, Շենգավիթ Վերին Շենգավիթ 2 փողոց 20/1 շենք 43 հասցեում գտնվող բնակարանի շուկայական արժեքը:

Գնահատողի և գնահատման կազմակերպության տվյալները

Գնահատման կազմակերպության անվանումը	«Արմէքսպերտիզա» ՍՊԸ
Իրավաբանական հասցեն	ք. Երևան, Գ. Նժդեհի 26
Տնօրեն	Է. Նանյան
Գնահատող	Դիաննա Ռաֆիկի Խաչատուրյան
Գնահատողի որակավորման վկայական	ԳԳ-2023-52, տրված 19.09.2023թ.

2. Գնահատման նպատակով ներկայացված փաստաթղթերի ցանկ

Ներկայացվել է անշարժ գույքի սեփականության (օգտագործման) իրավունքի գրանցման թիվ 10082017-01-0094 վկայականի պատճենը:

3. Գնահատման պատվիրատուն և հիմքը

Գնահատման հիմք է հանդիսանում պատվիրատուի՝ 03.08.2026թ. գրությունը և 18.12.2025թ. կնքված թիվ ՀԿԱԾ-ԱՄԳ/ԱԳԳԾ-26/1 պայմանագիրը:

4. Գնահատվող օբյեկտը, նույնականացման տվյալները և գնահատվող օբյեկտի նկատմամբ իրավունքների տեսակը

Տվյալ հաշվետվության գնահատման օբյեկտը հանդիսանում է ՀՀ քաղաք Երևան, Շենգավիթ Վերին Շենգավիթ 2 փողոց 20/1 շենք 43 հասցեում գտնվող բնակարանը: Ըստ տրամադրված վկայականի պատճենի սեփականության իրավունքով գրանցված իրավունքի սուբյեկտներ է հանդիսանում՝

5. Գնահատման նպատակը (գնահատման գործառույթը)

Գնահատման նպատակը (գնահատման գործառույթը)՝ ՀԿԱԾ կատարողական վարույթի շրջանակներում անշարժ գույքի բռնագանձման հետևանքով դրա իրացումը:

Գնահատման արժեքի տեսակները՝ շուկայական արժեքներ:

Շուկայական արժեքը հաշվարկային դրամական մեծություն է, որով հավանաբար կիրականացվեր, գնահատման ամսաթվի դրությամբ, շահագրգիռ կողմերի միջև, բաց և մրցակցային շուկայում գնահատվող օբյեկտի փոխանակում, որի պարագայում կողմերից յուրաքանչյուրը, իրազեկված լինելով, գործում է ողջամտորեն և առանց հարկադրանքի:

Գնահատող

1) Շուկայական արժեքի սահմանումը պետք է մեկնաբանվի՝ համաձայն հետևյալ հայեցակարգային շրջանակի՝

ա. «Հաշվարկային դրամական մեծություն»-ը վերաբերում է դրամական գնին, որը կարող է վճարվել օբյեկտի համար առևտրային շուկայական գործարքի ժամանակ: Շուկայական արժեքը հանդես է գալիս որպես առավել հավանական գին, որը, ըստ ողջամիտ նկատառումների՝ կարող է ձեռք բերվել շուկայում գնահատման ամսաթվի դրությամբ շուկայական արժեքի սահմանման մեջ եղած պայմաններին հետևելու դեպքում: Սա վաճառողի համար ձեռք բերվող արժեքներից լավագույնն է և առավել շահավետը գնորդի համար: Այդ արժեքի սահմանման ժամանակ հաշվի չեն առնվում, մասնավորապես, գործարքի հատուկ պայմաններից և հանգամանքների հետևանքով բարձրացված կամ իջեցված գները:

բ. «... որով հավանաբար կիրականացվեր...» նշվում է այն փաստը, որ գնահատվող օբյեկտի արժեքը հանդիսանում է ենթադրյալ գնահատված արժեք, այլ ոչ թե կանխորոշված կամ վաճառքի իրական գին: Այն իրենից ներկայացնում է գործարքի գինը գնահատման ամսաթվի դրությամբ, որտեղ իրականացվում են շուկայական արժեքի սահմանման մեջ եղած բոլոր այլ պայմանները:

գ. «... գնահատման ամսաթվի դրությամբ...» արտահայտում է պահանջ՝ ըստ որի արժեքը պետք է գնահատվի կոնկրետ ամսաթվի դրությամբ: Կապված այն բանի հետ, որ շուկան և շուկայական պայմանները կարող են փոփոխվել, այլ ժամանակի համար հավանական արժեքը կարող է սխալ լինել կամ չհամապատասխանել իրականությանը: Արժեքի գնահատման արդյունքն արտացոլում է գնահատման ամսաթվի դրությամբ շուկայի վիճակը և պայմանները, այլ ոչ թե որևէ այլ ամսաթվի դրությամբ:

դ. «...շահագրգիռ կողմերի միջև...» վերաբերում է շահագրգիռ գնորդին և վաճառողին:

Շահագրգիռ գնորդն ունի գնելու դրդապատճառներ, բայց ոչինչ նրան չի պարտադրում դա անել: Նման գնորդն ստիպված չէ գնում կատարել և միտված չէ ցանկացած գին վճարել: Բացի այդ, նա գնումը կատարում է՝ գործելով համաձայն ներկայիս շուկայի իրողությունների և ակնկալիքների, այլ ոչ թե երևակայական կամ հիպոթետիկ շուկայի, որոնց գոյությունը չի կարող ցուցադրվել կամ կանխատեսվել: Հնարավոր գնորդը չի վճարի շուկայականից ավելի բարձր գին: Գնահատվող օբյեկտի ներկայիս սեփականատերը նույնպես այդ «շուկան» ձևավորողների շարքում է:

Շահագրգիռ վաճառողը չի ցանկանում պարտադիր վաճառել, ստիպված չէ վաճառել և ոչ էլ պատրաստ է վաճառել ցանկացած գնով կամ հաստատել այն արժեքը, որը տվյալ պահին չի համարվում խելամիտ շուկայում: Շահագրգիռ վաճառողի դրդապատճառը շուկայական պայմաններում գնահատվող օբյեկտի վաճառքն է բաց շուկայում ամենահավանական գնով՝ անկախ գնից ակնկալվող շուկայի ուսումնասիրությունից հետո:

ե. «...բաց և մրցակցային շուկայում գնահատվող օբյեկտի փոխանակում...» նշանակում է, որ կողմերի միջև չկան որևէ կոնկրետ կամ հատուկ փոխհարաբերություններ, օրինակ,

Գնահատող

մայր և դուստր ընկերությունների կամ վարձատուի և վարձակալի միջև հարաբերությունները, որոնք կարող են գնի մակարդակը դարձնել շուկային ոչ բնորոշ կամ լինել գերագնահատված: Ենթադրվում է, որ շուկայական արժեքի գնով գործարքը պետք է իրականացվի այնպիսի կողմերի միջև, որոնք կապված չեն որևէ հարաբերություններով, և կողմերից յուրաքանչյուրը գործում է ինքնուրույն: Գնահատվող օբյեկտը շուկա է հանվել առավել հարմար ձևով, որպեսզի ապահովվի դրա իրացումը ձեռք բերվող տարբերակներից լավագույնով, ողջամիտ նկատառումներով, շուկայական արժեքի սահմանմանը համապատասխան գնով: Վաճառքի մեթոդը պետք է լինի այնպիսին, որը կապահովի շուկայում վաճառողի համար հասանելի լավագույն գին: Շուկայում ցուցադրման ժամկետի տևողությունը կարող է տարբեր լինել՝ կախված գնահատվող օբյեկտի և շուկայական պայմանների տեսակից: Միակ պայմանն այն է, որ այն պետք է բավարար լինի գնահատվող օբյեկտի հանդեպ շուկայի բավարար քանակությամբ մասնակիցների ուշադրությունը գրավելու համար:

զ. «... որի պարագայում կողմերից յուրաքանչյուրը, իրազեկված լինելով, գործում է ողջամտորեն ...» նշանակում է այն ենթադրությունը, որ շահագրգիռ գնորդը, այնպես էլ շահագրգիռ վաճառողը, բավականաչափ տեղեկացված են վաճառվող օբյեկտի, դրա փաստացի և պոտենցիալ կիրառման բնույթին և հատկություններին, ինչպես նաև շուկայի վիճակի մասին ըստ գնահատման ընթացիկ ամսաթվի: Հետագայում ենթադրվում է, որ նրանցից յուրաքանչյուրը հաշվենկատ է օգտագործում համապատասխան տեղեկատվությունը՝ ձգտելով հասնել իր տեսանկյունից գործարքի առավել շահավետ արժեքի: Սա վերաբերում է գնահատման ամսաթվի դրությամբ շուկայի վիճակի հաշվարկին, այլ ոչ թե հետագա ժամկետում արտահայտված հետադարձ դատողություններին:

է. «...և առանց հարկադրանքի...» նշանակում է, որ կողմերից յուրաքանչյուրն ունի գործարքի իրականացման դրդապատճառներ, բայց կողմերից և ոչ մեկը հարկադրված կամ ստիպված չէ գործարք կատարել:

«Շուկայական արժեք» հասկացությունը ենթադրում է, որ գները սահմանվում են բաց և մրցունակ շուկայում, որտեղ մասնակիցներն օժտված են գործելու ազատությամբ: Գնահատվող օբյեկտների շուկան կարող է լինել ինչպես միջազգային, այնպես էլ տեղական, որը կարող է բաղկացած լինել բազմաթիվ գնորդներից և վաճառողներից կամ լինել սահմանափակ մասնակիցների քանակով:

Գնահատող

6. Գնահատման ամսաթվերը

Անշարժ գույքի տեղազննության աշխատանքները կատարվել են 03.08.2026թ.:
Անշարժ գույքի շուկայական արժեքը սահմանվել է 03.08.2026թ.:
Անշարժ գույքի գնահատման հաշվետվությունը կազմվել է 11.09.2026թ.:

7. Հաշվետվության ձևը

Հաշվետվությունը կազմվել է պատմողական ձևով, ունի աղյուսակային և տեքստային մեկնաբանություններ:

8. Գնահատման աշխատանքների ընթացակարգը

Գնահատման աշխատանքների ընթացակարգը բաղկացած է հետևյալ հաջորդական փուլերից. նախապատրաստական փուլ և հիմնական փուլ:

1) Նախապատրաստական փուլում իրականացվում է՝

ա. գնահատվող օբյեկտի փաստաթղթերի հավաքագրում և ուսումնասիրություն, պատվերի ընդունում,

բ. գնահատման առաջադրանքի ձևակերպում և պայմանագրի կնքում:

2) Փաստաթղթերի նախնական ուսումնասիրության ընթացքում փաստաթղթերի հիման վրա անհրաժեշտ է պարզել գնահատման ներկայացված օբյեկտի իրավական կարգավիճակը, ինչպես նաև գնահատվող գույքի հիմնական տվյալները: Գնահատման առաջադրանքը պետք է պարտադիր ներառի գնահատման նպատակը և գնահատվող իրավունքները և սահմանափակումները: Գնահատման նպատակը և գնահատվող իրավունքի տեսակը պետք է համաձայնեցված լինեն գնահատման սուբյեկտների հետ:

3) Գնահատման պայմանագիրը կնքվում է գրավոր՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով և պետք է պարունակի հետևյալ պարտադիր տեղեկությունները.

ա. գնահատվող օբյեկտի անվանման և նույնականացման վերաբերյալ,

բ. գնահատման դիմաց վճարի չափի վերաբերյալ,

գ. գնահատման ստանդարտներով սահմանված և գնահատմամբ որոշվող արժեքի տեսակի, գնահատման ամսաթվի և տարեթվի վերաբերյալ,

դ. գնահատման առաջադրանքի վերաբերյալ:

Պայմանագիրը կարող է նաև պարունակել Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված այլ տեղեկություններ:

4) Հիմնական փուլում իրականացվում են՝

ա. գնահատվող օբյեկտի տեղազննում (լուսանկարում) (կախված գնահատվող օբյեկտի տեսակից),

Գնահատող



բ. գնահատման համար անհրաժեշտ տեղեկատվության հավաքագրում, մշակում և վերլուծություն,

գ. գնահատման համապատասխան սկզբունքների, մոտեցումների և մեթոդների ընտրություն,

դ. գնահատում՝ ընտրված մոտեցման (կամ մոտեցումների) կիրառմամբ,

ե. վերջնական արդյունքի հաշվարկման նպատակով տարբեր մոտեցումներով հաշվարկված արդյունքների համադրում,

զ. հաշվետվության կազմում և տրամադրում:

9. Գնահատվող օբյեկտի համառոտ նկարագրությունը

Ըստ պատվիրատուի կողմից տրամադրված անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման թիվ 10082017-01-0094 վկայականի պատճենում արտացոլված տվյալների բնակարանի մակերեսը կազմում է 53,05 քմ:

Գնահատման առարկայի բնութագիրը

Հասցե	ՀՀ քաղաք Երևան, Շենգավիթ Վերին Շենգավիթ 2 փողոց 20/1 շենք 43		
Սեփականատերեր			
Սեփականության իրավունքի գրանցման վկայական	10082017-01-0094		
Իրավունքի տեսակ	Սեփականություն		
Շուկայական մոտարկված կադաստրային արժեքը (դրամ)	11 873 083		
Նպատակային նշանակությունը	բնակելի		
Գործառնական նշանակությունը	բնակարան		
Ընթացիկ շահագործումը	բնակարան		
Տրանսպորտային մատչելիություն	Լավ		
Կառույցի տիպ	Պանելային		
Վնասվածության աստիճան	0 կարգի		
Հարկայնությունը/հարկ	14/11		
Միջհարկային ծածկը	երկաթբետոն		
Արտաքին պատերը	Առանց արտաքին հարդարման		
Մակերեսը (քմ)	53,05քմ.		
Առաստաղի բարձրությունը	2,75 մետր		
Կոմունիկացիաներ	**Անվանում**	**Առկա է**	**Առկա չէ**
	Ջուր	X	
	Կոյուղի	X	
	Էլեկտրամատակարարում	X	

Գնահատող

	Գազամատակարարում	X	
	Ջեռուցում		X
Ներքին հարդարանք (պատեր, հատակ, դռներ և պատուհաններ)	Բնակարանի ներքին հարդարումը իրականացված է ներկանյութերով, միջինից ցածր վիճակ, հատակները սվաղած, մասամբ մանրահատակ: Պատուհանները փայտե, ներքին դռները փայտե , մուտքի դուռը երկաթե:		
Սանհանգույց	Հատակը սալիկապատ, պատերը ներկանյութ		
Ներքին հարդարման ընդհանուր գնահատական (1-7 բալային սանդղակով) 1, զրոյական վիճակ, 2. վատ վիճակ, 3. միջինից ցածր, 4. միջին վիճակ, 5. միջինից բարձր, 6. լավ վիճակ, 7. գերազանց	Ներքին հարդարանքը /1-7/ սանդղակով համապատասխանում է 3-րդ կատեգորիային, միջինից ցածր վիճակ:		
Այլ տեղեկություն			

Գնահատող

Հավելված

10. Գնահատվող գույքի լուսանկարներ



Լուսանկար1



Լուսանկար2



Լուսանկար3



Լուսանկար4






Գնահատող

Լուսանկար5	Լոսանկար 6
	


Լուսանկար15	Լոսանկար 16
	

Գնահատող

	
Լուսանկար17	Լուսանկար18

Գնահատող

11. Օգտագործված փաստաթղթեր



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՎԿԱՅԱԿԱՆ
ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻ ՆԿԱՏՄԱՄԲ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ
ՊԵՏԱԿԱՆ ԳՐԱՆՑՄԱՆ

Սույն վկայականով հաստատվում է «15» Սեպտեմբերի 2015 թվականին գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման միասնական մատյանում կատարված անշարժ գույքի նկատմամբ իրավունքի պետական գրանցումը հետևյալ տվյալներով.

1. ԳՐԱՆՑՎԱԾ ԻՐԱՎՈՒՆՔԻ ՍՈՒԲՅԵԿՏ (ՆԵՐ)

2. ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻ ԳՏՆՎԵԼՈՒ ՎԱՅՐԸ ԵՎ ԱՆՎԱՆՈՒՄԸ

Երևան, Շենգավիթ Վերին Շենգավիթ 2 փողոց 20/1 շենք, 43 բնակարան

3. ԳՐԱՆՑՄԱՆ ՀԱՄԱՐ ՀԻՄՔ ՀԱՆԴԻՍԱՑԱԾ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԸ

Նոտարի 09.09.2015թ. թիվ 2289 անշարժ գույքի նվիրատվության պայմանագիր

4. ՀՈՂԱՄԱՍԻ ԲՆՈՒԹԱԳՐԵՐԸ

Կադաստրային ծածկագիրը՝

Մակերեսի չափը (հա)՝

Նպատակային նշանակությունը՝

Գործառնական նշանակությունը կամ հողատեսքը՝


Գրանցված իրավունքի տեսակը՝

ESTATE CADASTRE

Վկայական N 10082017-01-0094, գաղտնաբառ՝ R5ZNJBLBW9TU

էջ 1

Գնահատող



5. ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԲՆՈՒԹԱԳՐԵՐԸ

1) Նպատակային նշանակությունը՝ Բնակելի

2) Բնութագրերը ըստ առանձին շինությունների՝

Հ/հ	Կադաստրային ծածկագիրը	Տեսակը	Մակերեսի չափը	Գրանցված իրավունքի տեսակը
1	01-011-0072-0143-001-043	Բնակարան	53.05 ք.մ.	ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

Լրացուցիչ նշումներ և տեղեկություններ

Համաձայն ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 224-րդ հոդվածի սեփականատերը բազմաբնակարան բնակելի շենքի զբաղեցրած հողամասի և ընդհանուր օգտագործման տարածքների նկատմամբ ունի համապատասխան բաժնային սեփականության իրավունք: Սույն վկայականը հանդիսանում է թիվ 15092015-01-0054, գաղտնաբառ՝ HQCZSQMGSR3S վկայականի ուղղված տարբերակը:

Գրանցումը իրականացնող պաշտոնատար անձի անունը, ազգանունը՝ Մարտին Սեդրակյան

զբաղեցրած պաշտոնը՝ Երևանի տարածքային ստորաբաժանման անշարժ գույքի ռեգիստր

Կ.Տ.

Գնահատող


Առավել մանրամասն տես սույն եզրակացությանը կից լուսանկարչական հավելվածում:

Տեղադրության հղումը՝

https://yandex.com/maps/10262/yerevan/?from=tableau_yabro&ll=44.504461%2C40.152344&mode=search&sll=44.493733%2C40.154353&text=40.154353%2C44.493733&z=14.56


Ստորև ներկայացվում է գնահատվող գույքի լուսանկարները արբանյակից և կադաստրային քարտեզից





Գնահատող

Շուկայական արժեքին մոտարկված կադաստրային արժեք



12. Առավել արդյունավետ օգտագործում

Առավել արդյունավետ օգտագործումն օգտագործման այն ձևն է, որը մասնակցի տեսանկյունից օբյեկտի համար ստեղծում է ամենաբարձր արժեքը:

Ֆիզիկապես հնարավոր, օրենսդրորեն թույլատրելի և տնտեսապես նպատակահարմար տարբերակներից առավել շահութաբերը գնահատողի կարծիքով հանդիսանում է ներկա օգտագործման տարբերակը, քանի որ բնակարանը իր տեղադրությամբ ու դիրքով, ինչպես նաև գործառնական նշանակությամբ նպատակահարմար չէ շահագործել որևիցէ այլ նշանակությամբ:

13.Գնահատման մոտեցումների (մեթոդների) ընտրությունը.

Անշարժ գույքի գնահատման դասական մոտեցումներն են.

ա) համեմատական մոտեցում

բ) ծախսային մոտեցում

գ) եկամտային մոտեցում

Համեմատական մոտեցում

Համեմատական մոտեցման կիրառման դեպքում արժեքը որոշվում է գնահատվող օբյեկտը նույնական կամ համադրելի (նմանատիպ) օբյեկտների հետ համեմատելով, որոնց համար առկա է գների վերաբերյալ տեղեկատվություն

Համեմատական մոտեցումը ներառում է հետևյալ մեթոդները՝

Համադրելի գործարքների մեթոդ

Համանման հանրային ընկերությունների համեմատական մեթոդ

Քանի որ գնահատման ներկայացված գույքը անշարժ գույք է, ուստի կիրառվում է համեմատական գործարքների մեթոդը:

Գնահատող

Համադրելի գործարքների մեթոդը, որը նաև հայտնի է որպես կողմնորոշիչ գործարքների մեթոդ, արժեքը որոշելու նպատակով օգտագործվում է նույնական կամ համադրելի օբյեկտների հետ կապված գործարքների վերաբերյալ տեղեկատվությունը:
Համադրելի գործարքների մեթոդի հիմնական փուլերն են՝ որոշել համեմատության միավորները, որոնք օգտագործվում են համապատասխան շուկայի մասնակիցների կողմից, մասնավորապես.
ա. որոշել համեմատության միավորները, որոնք օգտագործվում են համապատասխան շուկայում մասնակիցների կողմից,
բ. որոշել համապատասխան համադրելի գործարքները և հաշվարկել այդ գործարքների հիմնական գնահատման չափանիշները,
գ. կատարել համադրելի օբյեկտների և գնահատվող օբյեկտների որակական և քանակական նմանությունների և տարբերությունների հետևողական համեմատական վերլուծություն, որոնք օգտագործվում են համապատասխան շուկայի մասնակիցների կողմից,
դ. կատարել անհրաժեշտ ճշգրտումներ, եթե այդպիսիք կան, գնահատման ցուցանիշներում, որպեսզի արտացոլվի գնահատվող օբյեկտի և համադրելի օբյեկտների տարբերությունները,
ե. դիտարկել օբյեկտի գնահատման համար ճշգրտված ցուցանիշների կիրառում,
զ. եթե օգտագործվել են գնահատման մի քանի ցուցանիշներ, ստացված արժեքի ցուցանիշների համաձայնեցումը :
Հիմք ընդունելով վերոհիշյալը՝ գնահատողն ունի բավարար քանակությամբ արժանահավատ տեղեկատվություն, որը առավելագույնս արտացոլում և բացահայտում է այն գործոնները որոնց ազդեցությամբ տվյալ անշարժ գույքի վաճառքը բաց մրցակցային շուկայում առավել հավանական է, ուստի համեմատական մոտեցման կիրառումը գնահատվող անշարժ գույքի սեփականության իրավունքի շուկայական արժեքը որոշելու համար հիմնավորված է:

Եկամտային մոտեցում

Եկամտային մոտեցման շրջանակներում գնահատման արդյունքների ստացման համար կիրառվում են տարբեր մեթոդներ, որոնց ընդհանրությունը կայանում է նրանում, որ արժեքը որոշվում է փաստացի կամ կանխատեսվող եկամուտների վրա, որոնք ստանում է կամ կարող է ստանալ իրավունքի սեփականատերը :
Եկամտային մոտեցումը տրամադրում է արժեքի ցուցիչ՝ ապագա դրամական հոսքերը փոխակերպելով ընդհանուր ընթացիկ արժեքի: Եկամտային մոտեցմամբ արժեքը որոշվում է գնահատվող օբյեկտի եկամտաբերությամբ, դրամական հոսքի կամ ծախսերի խնայողությունների արժեքի հիման վրա:
Եկամտային մոտեցման կարևորագույն հիմքն է հանդիսանում է այն, որ ներդրողները ակնկալում են շահույթ ստանալ իրենց ներդրումներից, և որ նման եկամուտը պետք է արտացոլի ներդրումների ռիսկի ենթադրյալ մակարդակը:
Որպես կանոն, ներդրողները ակնկալել են փոխհատուցում միայն համակարգված ռիսկի համար (նաև հայտնի է որպես «շուկայական ռիսկ» կամ «չդիվերսիֆիկացված ռիսկ»):
Եկամտային մոտեցման մեթոդները փաստացի հիմնված են ապագա դրամական հոսքերի գումարների դիսկոնտավորմանը (փոխակերպմանը) ընթացիկ արժեքի: Դրանք դրամական հոսքերի դիսկոնտավորման մեթոդի տարբերակներն են:
Դրամական հոսքերի դիսկոնտավորման մեթոդ (ԴՀԴ)

Գնահատող

ԴՀԴ մեթոդի համաձայն՝ կանխատեսվող դրամական հոսքը դիսկոնտավորվում է հակառակ ուղղությամբ (ապագայից և) մինչ գնահատման ամսաթիվը, որը արդյունքում թույլ է տալիս ստանալ գնահատվող օբյեկտի ընթացիկ արժեքը:

ԴՀԴ մեթոդի հիմնական փուլերն են՝

ա. ըստ գնահատվող օբյեկտի և դրա գնահատման առանձնահատկություններից կախված դրամական հոսքի առավել հարմար տեսակի ընտրություն,
բ.դրամական հոսքերի կանխատեսման առավել օպտիմալ կոնկրետ ժամանակահատվածի որոշում,
գ.ամբողջ ժամանակահատվածի համար դրամական հոսքերի կանխատեսման նախապատրաստում,
դ.որոշված կանխատեսվող ժամկետի վերջում մնացորդային արժեքի որոշման անհրաժեշտության դիտարկում, այնուհետև, հաշվի առնելով գնահատվող օբյեկտի բնութագրերը, համապատասխան տերմինալային արժեքի որոշում,
ե. դիսկոնտավորման դրույքաչափի որոշում,
զ. դիսկոնտավորման դրույքաչափի կիրառումը կանխատեսվող ապագա դրամական հոսքերի նկատմամբ՝ անհրաժեշտության դեպքում հաշվի առնելով տերմինալային արժեքը:
Դիսկոնտավորման դրույքաչափը պետք է արտացոլի ոչ միայն դրամական միջոցի ժամանակավոր արժեքը, այլ նաև այն ռիսկերը, որոնք կապված են օբյեկտի ապագա շահագործման և դրամական հոսքերի տեսակի հետ:

Դիսկոնտավորման դրույքաչափերի ընդունման կամ հաշվարկման տարածված մեթոդները հետևյալն են՝
ա. Կապիտալի գնագոյացման մոդել (CAPM),
բ. կապիտալի նկատմամբ միջին կշռված ծախսեր (WACC) ,
գ.դիտարկվող կամ ստացված դրույքաչափերի և եկամտաբերության հարաբերակցություն,
դ. Կումուլյատիվ մեթոդ

Եկամտի կապիտալիզացիայի մեթոդ

Եկամտի կապիտալիզացիայի մեթոդը հիմնականում կիրառվում է երբ առկա է եկամտի կայուն աճի տեմպեր և շահույթ գնահատման ամսաթվի դրությամբ, այս դեպքում կարիք չկա սահմանել կոնկրետ կանխատեսման ժամանակահատված, և տերմինալային արժեքը կարող է ծառայել որպես արժեքի որոշման միակ հիմք:

Ծախսային մոտեցում

Ծախսային մոտեցման հիմքում ընկած է այն սկզբունքը, ըստ որի գնորդը գնահատվող օբյեկտի համար չի վճարի ավելին, քան հավասար օգտակարությամբ օբյեկտի ձեռք բերելու դեպքում, լինի դա գնման կամ կառուցման միջոցով, գործընթացը բարդացնող գործոնների բացակայությամբ՝ անհարկի ժամանակ, անհարմարություն, ռիսկ կամ այլ գործոններ: Այս մոտեցումը հնարավոր է դարձնում ստանալ արժեք օբյեկտի արժեքը փոխարինման կամ վերարտադրման ընթացիկ ծախսերի որոշման միջոցով և ֆիզիկական մաշվածության ու հնացման բոլոր տեսակների կիրառմամբ:
Ընդհանուր առմամբ, առկա է ծախսերի մոտեցման երեք մեթոդ.
ա. ծախսերի փոխարինման մեթոդ՝ արտացոլում է համարժեք օգտակարությամբ նմանատիպ օբյեկտի ստեղծման ծախսերի հաշվարկման միջոցով որոշվող արժեքը,

Գնահատող



բ. ծախսերի վերարտադրման մեթոդ՝ արտացոլում է օբյեկտի ճշգրիտ նմանակի վերստեղծման ծախսերի հաշվարկման միջոցով որոշվող արժեքը:
գ. բաղադրիչային մեթոդ, որի շնորհիվ հաշվարկում է գնահատվող օբյեկտի արժեքը՝ օբյեկտի առանձին բաղադրիչ մասերի արժեքները գումարելով:
Ծախսային մոտեցումը պետք է ներառի բոլոր ծախսերը, որոնք տվյալ մասնակիցը կարող է կրել:
Արժեքի տարրերը կարող են տարբերվել, կախված գնահատվող օբյեկտի տեսակից և պետք է ներառեն ուղղակի և անուղղակի ծախսեր, որոնք պահանջվում են գնահատման ամսաթվի դրությամբ օբյեկտի փոխարինման (վերարտադրման) համար, մասնավորապես՝
ա. *ուղղակի* ծախսեր (նյութեր, աշխատուժ)
բ. *անուղղակի* ծախսեր (տրանսպորտային ծախսեր, տեղադրման ծախսեր, մասնագիտական վճարներ (նախագծային, թույլտվություն, ճարտարապետական, իրավաբանական և այլն), այլ վճարներ (միջնորդավճարներ և այլն), ընդհանուր ծախսեր, հարկեր, ֆինանսական ծախսեր (օրինակ՝ պարտքային ֆինանսավորման տոկոսներ) և ձեռնարկատիրական շահույթ):
Մաշվածության հետ կապված ճշգրտումները սովորաբար դիտարկվում են հետևյալ տեսակների համար, որոնք ուղղումներ կամ ճշգրտումներ կատարելիս կարող են հետագայում բաժանվել ենթատեսակների.
ա. ֆիզիկական մաշվածություն՝ գնահատվող օբյեկտի կամ դրա բաղադրիչների ֆիզիկական մաշվածության պատճառով օգտակարության ցանկացած կորուստ, որն առաջացել է օգտագործման հետևանքով և տարիքից,
բ. ֆունկցիոնալ մաշվածություն՝ գնահատվող օբյեկտի անարդյունավետության հետևանքով առաջացած օգտակարության ցանկացած կորուստ, համեմատած դրա փոխարինման հետ, ինչպիսիք են նախագծմումը, տեխնիկական բնութագրերն ու տեխնոլոգիայի հնացած լինելը,
գ. արտաքին կամ տնտեսական մաշվածություն՝ գնահատվող օբյեկտի նկատմամբ արտաքին համարվող տնտեսական կամ տեղական պայմանների հետևանքով առաջացած օգտակարության ցանկացած կորուստ: Այս տեսակի մաշվածությունը կարող է լինել ժամանակավոր կամ մշտական:

Գնահատող

14. Շուկայական արժեքի հաշվարկ համեմատական մեթոդով.

Անշարժ գույքի գնահատման ժամանակ համեմատական մեթոդը կիրառվում է հետևյալ հաջորդականությամբ՝


- համանման անշարժ գույքի համար շուկայական իրավիճակի վերլուծություն և վերլուծության համար արժանահավատ տեղեկատվության ընտրություն,
- համեմատության համապատասխան միավորի որոշում,
- համեմատության անհրաժեշտ տարրերի առանձնացում,
- համեմատության միավորների արժեքի ճշգրտում,
- համեմատվող անշարժ գույքի համար արժեքի մի քանի ճշգրտված ցուցանիշների համապատասխանեցումը մեկ ցուցանիշին կամ գնահատվող անշարժ գույքի արժեքի միջակայքին (դիապազոն):


Որպես համեմատության միավոր են ընդունվում անշարժ գույքի շուկայում ձևավորված չափորոշիչները: Նույն անշարժ գույքի գնահատաման համար կարող են միաժամանակ կիրառվել համեմատման մի քանի միավորներ:

Ստանդարտով նախատեսված մնացյալ գնագոյացման գործոնները, որոնցով գների ճշգրտումներ ստորև բերված աղյուսակում չեն կատարվել կամ գնահատվող անշարժ գույքի նույն գործոններից էականորեն չեն տարբերվում, կամ էլ գնահատողի կողմից չեն կիրառվել գնի վրա չնչին ազդեցության պատճառով.

Գնահատող

Համեմատական տվյալներ





Գնահատող

Համեմատության էլեմենտը	Գնահատվող օբյեկտը	օբյեկտ-անալոգ №1	օբյեկտ-անալոգ №2	օբյեկտ-անալոգ №3	
Անվանումը	բնակարան	բնակարան	բնակարան	բնակարան	
Հասցե	Վերին Շենգավիթ	Վերին Շենգավիթ	Վերին Շենգավիթ	Վերին Շենգավիթ	
Վաճառքի գինը (Դրամ)		47,577,000	40,989,000	45,747,000	
Մակերես (քմ)	53.05	82	80	86	
1 քմ գինը (դրամ/քմ)		580,207	512,363	531,942	
N 1 Շուկայի վիճակ, վաճառքի պայմաններ, վաճառքի կամ առաջարկի ամսաթիվը		https://www.list.am/item/24051536?ld_src=2	https://www.list.am/item/23911089?ld_src=2	https://www.list.am/item/24051756?ld_src=2	
Ուղղումը (%)		-5%	-5%	-5%	կայքում հայտարարություն տված անձինք պատրաստ են սակարկել տան արժեքը
Ուղղումը (դրամ)		-29,010	-25,618	-26,597	
Ուղղված 1 քմ գինը (դրամ/քմ)		551,197	486,744	505,345	
N 2 Գույքային իրավունքներն ու սահմանափակումները (այդ թվում՝ իրավունքների և օգտագործման նկատմամբ)		գնահատվողի նման	գնահատվողի նման	գնահատվողի նման	
Ուղղումը (%)		0%	0%	0%	
Ուղղումը (դրամ)		0	0	0	
Ուղղված 1 քմ գինը (դրամ/քմ)		551,197	486,744	505,345	
N 3 Տեղադրությունը և դիրքը, տրանսպորտային հանգույցների առկայությունը և մատչելիությունը	լավ	լավ	լավ	լավ	
Ուղղումը (%)		0%	0%	0%	
Ուղղումը (դրամ)		0	0	0	
Ուղղված 1 քմ գինը (դրամ/քմ)		551,197	486,744	505,345	
N 4 Շենքի տիպը, ֆիզիկական բնութագրերը, կոնստրուկտիվ նյութերի տարրերի տեսակը	Պանելային	Պանելային	Պանելային	Պանելային	
Ուղղումը (%)		0%	0%	0%	
Ուղղումը (դրամ)		0	0	0	
Ուղղված 1 քմ գինը (դրամ/քմ)		551,197	486,744	505,345	
N 5 Շենք, շինությունների չափերը (բարձրություն, մակերես կամ ծավալ)	53.05	82	80	86	
Ուղղումը (%)		3%	3%	3%	
Ուղղումը (դրամ)		16,536	14,602	15,160	
Ուղղված 1 քմ գինը (դրամ/քմ)		567,733	501,347	520,505	
N 6 Հարկայնությունը, հարկը	14-ի 11	14-ի 9	14-ի 9	14-ի 13	
Ուղղումը (%)		0%	0%	0%	
Ուղղումը (դրամ)		0	0	0	

Գնահատող

Ուղղված 1 քմ գինը (դրամ/քմ)		567,733	501,347	520,505	
N 7 Ներքին հարդարման վիճակը	3	4	4	4	
Ուղղումը (%)		-5%	-5%	-5%	
Ուղղումը (դրամ)		-28,387	-25,067	-26,025	
Ուղղված 1 քմ գինը (դրամ/քմ)		539,346	476,279	494,480	
N 8 Ավտոկայանատեղիի առկայությունը կամ հնարավորությունը		Գնահատվողի նման	Գնահատվողի նման	Գնահատվողի նման	
Ուղղումը (%)		0%	0%	0%	
Ուղղումը (դրամ)		0	0	0	
Ուղղված 1 քմ գինը (դրամ/քմ)		539,346	476,279	494,480	
N 9 Ինժեներական ցանցերն ու կոմունալ սպասարկումը (էլեկտրամատակարարում, գազամատակարարում, ջրամատակարարում)	առկա է	առկա է	առկա է	առկա է	
Ուղղումը (%)		0%	0%	0%	
Ուղղումը (դրամ)		0	0	0	
Ուղղված 1 քմ գինը (դրամ/քմ)		539,346	476,279	494,480	
N 10 Բնակելի, հասարակական և արտադրական նշանակության շենքեր-շինությունների արժեքի վրա ազդող այլ գործոններ	Առկա չէ ջեռուցման համակարգ	Առկա է ջեռուցման համակարգ	Առկա է ջեռուցման համակարգ	Առկա է ջեռուցման համակարգ	
Ուղղումը (%)		-3%	-3%	-3%	
Ուղղումը (դրամ)		-16,180	-14,288	-14,834	
Ուղղված 1 քմ գինը (դրամ/քմ)		523,166	461,991	479,645	
Կշռային գործակիցը		0.33	0.33	0.33	
Գնահատվող օբյեկտի 1քմ արժեքը (դրամ/քմ)	**488,267**				
Գնահատվող օբյեկտի արժեքը (դրամ)	**25,900,000**				

ՀՀ քաղաք Երևան, Շենգավիթ Վերին Շենգավիթ 2 փողոց 20/1 շենք 43 հասցեում գտնվող բնակարանի շուկայական արժեքը, տեղազննության կատարման ժամանակահատվածում ունեցած ապրանքային վիճակում, գնահատման համեմատական մոտեցմամբ գնահատված գնահատվում է **25 900 000 (քսանհինգ միլիոն ինը հարյուր հազար) ՀՀ դրամ:**

Գնահատող

15. Շուկայական արժեքի հաշվարկ եկամտային մոտեցմամբ

Տվյալ դեպքում կիրառվել է եկամտային մոտեցմամբ *եկամտի կապիտալավերածման եղանակը*: Այս եղանակը նախատեսում է

գնահատման գործընթացի հետևյալ հաջորդականությունը

- Պոտենցիալ համախառն եկամտի ($I_{պոտ}$) կանխատեսում, հաշվարկում՝ որպես կանոն գնահատման ամսաթվից մեկ տարվա կտրվածքով,
- Իրական համախառն եկամտի հաշվարկում ($I_{իրակ}$),
- Զուտ գործառնական եկամտի կանխատեսում, հաշվարկում (I),
- կապիտալավերածման գործակցի հաշվարկում (R),
- գնահատվող անշարժ գույքի շուկայական արժեքի որոշում՝ զուտ գործառնական եկամտի և կապիտալիզացիայի գործակցի հարաբերությամբ:

Պոտենցիալ համախառն եկամտի ($I_{պոտ}$) հաշվարկ:

Պոտենցիալ համախառն եկամուտը գնահատվող անշարժ գույքի առավել արդյունավետ օգտագործումից ստացվող հնարավոր եկամուտն է: Պոտենցիալ համախառն եկամուտը ($I_{պոտ}$) կարող է հաշվարկվել ելնելով այն ենթադրությունից, որ գնահատման օբյեկտը հանձնվել է վարձակալության կամ նմանատիպ անշարժ գույքի այլ օգտագործման վերաբերյալ տեղեկության վերլուծության հիման վրա: Տվյալ դեպքում գնահատվող օբյեկտի պոտենցիալ համախառն եկամուտը հաշվարկվել է՝ ելնելով այն ենթադրությունից, որ այն հանձնվել է վարձակալության: Պոտենցիալ համախառն եկամտի հաշվարկը իրականացվել է դիտարկվող տարածքում գտնվող գույքերի վարձակալության վերաբերյալ շուկայական տեղեկատվության վերլուծության հիման վրա: Տեղեկատվության աղբյուր են հանդիսացել համացանցային կայքերը, որտեղ զետեղված են ազատ շուկայում վաճառահանված և վարձակալության հանված գույքերի տվյալները:

Համեմատվող գույքերի վարձավճարների ճշգրտումն իրականացվել է հետևյալ կարգով.


I) Առաջին հերթին կիրառվել են գործակիցներ ըստ վարձակալության պայմանների և շուկայի վիճակի: Սրանցից յուրաքանչյուր հաջորդը կիրառվել է նախորդ արդյունքի նկատմամբ:


II) Երկրորդ հերթին իրականացվել են անմիջականորեն անշարժ գույքին վերաբերող ճշգրտումները: Սրանք կատարվել են ցանկացած կարգով, այսինքն կամայական հերթականությամբ:

Գնագոյացման այն գործոնները, որոնք նախատեսված են ստանդարտով, սակայն դրանցով գների ճշգրտումներ չեն կատարվել ստորև բերված աղյուսակում, ուրեմն դրանք կամ կիրառված գործոններից էականորեն չեն տարբերվում կամ էլ գնահատողի կողմից չեն կիրառվել գնի վրա չնչին ազդեցության պատճառով.

Գնահատող

Համեմատական տվյալներ





Գնահատող

Համեմատության տարրերը	Չափման միավորը	Գնահատվող օբյեկտը	Անալոգ օբյեկտ №1	Անալոգ օբյեկտ №2	Անալոգ օբյեկտ №3	
Նպատակային նշանակությունը		Բնակարան	Բնակարան	Բնակարան	Բնակարան	
Հասցե		Վերին Շենգավիթ	Վերին Շենգավիթ	Վերին Շենգավիթ	Վերին Շենգավիթ	
			https://www.list.am/item/19068656?ld_src=2	https://www.list.am/item/21294327?ld_src=2	https://www.list.am/item/23800980?ld_src=2	
Վարձավճարը	դրամ		200,000	350,000	300,000	
Մակերեսը	քմ	53.05	48	80	70	
Վարձավճարը	դր/քմ		4,167	4,375	4,286	
N 1 Ըստ վարձակալության պայմանների, շուկայի վիճակի և գործարքի ամսաթվի		08.2026թ. Գնահատում	08.2026թ.	08.2026թ.	08.2026թ.	
Ուղղումը	%		-5%	-5%	-5%	կայքում հայտարարություն տված անձինք պատրաստ են սակարկել տան վարձավճարը
Ուղղումը	դրամ		-208.3	-218.8	-214.3	
Ուղղված գինը	դր/քմ		3,958	4,156	4,071	
N 2 Ըստ բնակարանի հարկայության		14/11	12/7	9/1	12/8	
Ուղղումը	%		0%	3%	0%	
Ուղղումը	դրամ		0.00	124.69	0.00	
Ուղղված գինը	դր/քմ		3,958	4,281	4,071	
N 3 Ըստ ներքին հարդարման վիճակի		3	5	5	5	
Ուղղումը	%		-10%	-10%	-10%	
Ուղղումը	դրամ		-395.83	-428.09	-407.14	
Ուղղված գինը	դր/քմ		3,563	3,853	3,664	
N 4 Ըստ շենքի տիպի, ֆիզիկական բնութագրերի, կոնստրուկտիվ կտրվածքների տարրերի տեսակի, կառուցման տարեթվի		Պանելային	Պանելային	Պանելային	Պանելային	
Ուղղումը	%		0%	0%	0%	
Ուղղումը	դրամ		0.00	0.00	0.00	
Ուղղված գինը	դր/քմ		3,563	3,853	3,664	
N 5 Ըստ տեղադրության և դիրքի, ըստ տրանսպորտային մատչելիության, տրանսպորտային հանգույցների առկայության		լավ	լավ	լավ	լավ	

Գնահատող

Ուղղումը	%		0%	0%	0%	
Ուղղումը	դրամ		0.00	0.00	0.00	
Ուղղված գինը	դր/քմ		3,563	3,853	3,664	
N 6 Ըստ իրավունքների և սահմանափակումների			գնահատվողին նման	գնահատվողին նման	գնահատվողին նման	
Ուղղումը	%		0%	0%	0%	
Ուղղումը	դրամ		0.00	0.00	0.00	
Ուղղված գինը	դր/քմ		3,563	3,853	3,664	
N 7 Ըստ հիմնական և օժանդակ շինությունների չափերի (մակերես, բարձրություն, ծավալ)		53.05	48	80	70	
Ուղղումը	%		0%	3%	2%	
Ուղղումը	դրամ		0	116	73	
Ուղղված գինը	դր/քմ		3,563	3,968	3,738	
N 8 Ըստ գնագոյացման վրա ազդող այլ գործոնների		Առկա չէ ջեռուցման համակարգ	Առկա է ջեռուցման համակարգ	Առկա է ջեռուցման համակարգ	Առկա է ջեռուցման համակարգ	
Ուղղումը	%		-3%	-3%	-3%	
Ուղղումը	դրամ		-107	-119	-112	
Ուղղված գինը	դր/քմ		3,456	3,849	3,625	
Կշռային գործակիցը			0.333	0.333	0.333	
վարձակալության 1քմ արժեքը	դր/քմ	**3,643.50**				
Բնակարանի վարձավճարը դրամով		**193,288**				

Պոտենցիալ համախառն եկամուտը հաշվարկվել է հետևյալ բանաձևով.

$$I_{պոտ} = N \times S \times 12, \quad \text{որտեղ}$$

$I_{պոտ}$ - պոտենցիալ համախառն եկամուտն է (տարեկան),
N - վարձակալության արժեքն է 1քմ մակերեսի հաշվարկով,
S - Գույքի մակերեսն է

$$I_{պոտ} = 2\,319\,456$$

<u>Իրական համախառն եկամտի ($I_{իրակ}$) հաշվարկ</u>

Իրական համախառն եկամուտները հաշվելու համար հաշվի է առնվել պարապուրդները և չվճարման ռիսկերը: Վարձակալության շուկայի ուսումնասիրությունները և ռիելթորական գործակալությունների հետ անցկացված խորհրդակցությունների արդյունքները ցույց են տալիս, որ վարձակալության հանձնվող անշարժ գույքերի պարապուրդը միջինացված կարող է կազմել առնվազն մեկ ամիս: Հետևաբար թերբեռնվածության գործակիցը 0,92:

$$I_{իրակ} = 2\,319\,456 \times 0,92 = 2\,133\,900$$

Գնահատող



Զուտ գործառնական եկամտի (I) հաշվարկ:

Զուտ գործառնական եկամուտ - իրական համախառն եկամուտն է՝ նվազեցված շահագործման և կառավարման ծախսերի չափերով, առանց հաշվի առնելու փոխառու միջոցների գծով վճարումները և ամորտիզացիոն հատկացումները:

Շահագործման ծախսեր - անշարժ գույքի գործառնական պիտանելիության պահպանման համար անհրաժեշտ ծախսերն են, որոնք ապահովում են պոտենցիալ համախառն եկամտի ստացումը:

Գոյություն ունեն շահագործման երեք հիմնական ծախսեր.

ա) հաստատուն ծախսեր՝ գույքահարկի, հողի հարկի, ապահովագրական և այլ հաստատուն վճարումների հետ կապված ծախսերն են, որոնք կախված չեն անշարժ գույքի շահագործման ծանրաբեռնվածությունից,

բ) փոփոխական ծախսեր՝ կոմունալ, պահպանության, սանմաքրման, աղբահանության և այլ փոփոխական վճարումների և հարկերի հետ կապված ծախսերն են, որոնք կախված են անշարժ գույքի շահագործման ծանրաբեռնվածությունից,

գ) վերականգնման ծախսեր (պահուստային միջոցներ)՝ անշարժ գույքի տնտեսական կյանքի ընթացքում տանիքի, սանիտարական տեխնիկայի, վերելակի, ներքին կամ արտաքին ընթացիկ հարդարման և այլ առանձին արագամաշ տարրերի փոխարինման կամ բարելավման հետ կապված ծախսերն են,

դ) կառավարման ծախսեր՝ առանձին ծախսեր են, որոնք ուղղված են վարչակազմի աշխատավարձի ապահովմանը և կառավարման հետ կապված այլ գործառույթներին:

Շահագործման և կառավարման ծախսեր	իրական համախառն եկամտի 5%	106 695
Եկամտային հարկ	իրական համախառն եկամտի 10%	213 390
Զուտ գործառնական եկամուտ		1 813 815

Կապիտալիզացիայի գործակիցի հաշվարկ

Կապիտալիզացիայի գործակիցը տոկոսադրույք է, որը կիրառվում է անշարժ գույքի շուկայական արժեքը որոշելիս՝ անշարժ գույքից տարեկան կտրվածքով ստացվող ապագա եկամուտների հոսքը ընթացիկ արժեքի վերածման նպատակով: Կապիտալիզացիայի գործակիցն իր մեջ ներառում է կապիտալից ստացված եկամուտը և կապիտալի վերադարձը: Ընդ որում.

կապիտալից ստացված եկամուտը՝ ներդնողի դրամական միջոցների օգտագործման դիմաց վճարվող տոկոսաչափն է՝ կապված ներդրումների կոնկրետ ժամանակամիջոցի և ռիսկերի գործոնների հետ,

կապիտալի վերադարձը՝ ներդրված սկզբնական գումարի վերադարձն է:

Գնահատող

Կապիտալիզացիայի գործակիցը որոշվում է.

ա) վերլուծական՝ կոմուլյատիվ կառուցման եղանակով,

բ) շուկայական խտացման՝ էքստրացիայի եղանակով,

գ) հիպոթեքային-ներդրման՝ փոխառու կապիտալի օգտագործման եղանակով:

Եկամտի կապիտալավերածման եղանակով անշարժ գույքի շուկայական արժեքի հաշվարկման ժամանակ կապիտալիզացիայի գործակցի առավել իրատեսական արդյունքների է հանգեցնում շուկայի խտացման եղանակը:

Ստորև ներկայացված է հետազոտվող տարածքում մեր կողմից որպես վաճառքի համար վերցված բնակարանները՝ որպես վարձակալության գործարքների վերաբերյալ օրինակներ՝ հաշվի առնելով առաջին աղյուսակում կիրառված գործակիցները: Նշվածով իրականացված է կապիտալիզացիայի գործակցի հաշվարկը:

Անշարժ գույքի հասցեն	Վերին Շենգավիթ	Վերին Շենգավիթ	Վերին Շենգավիթ
Վարձակալության առաջարկի ամսաթիվը	08.2026թ.	08.2026թ.	08.2026թ.
Մակերեսը	82	80	86
Ընդամենը ամսավարձ	310,000	310,000	320,000
1 քմ ամսավարձը	3780.5	3875.0	3720.9
Պոտենցիալ համախառն եկամուտ	3720000	3720000	3840000
Պարապուրդ և չվճարումներ	8%	8%	8%
Իրական համախառն եկամուտ	3422400	3422400	3532800
Ծախսեր, պահուստային ֆոնդ և եկամտային հարկ	15%	15%	15%
Զուտ գործառնական եկամուտ (I)	2909040	2909040	3002880
Անշարժ գույքի շուկայական արժեքը (V)	47,577,000	40,989,000	45,747,000
Կապիտալիզացիայի գործակիցը (R)=(I/V)	0.06114	0.07097	0.06564
Կապիտալիզացիայի գործակիցը հաշվարկված շուկայական խտացման մեթոդով	0.06592		

Վերը հաշվարկված ելակետային տվյալների պայմաններում գնահատման ենթակա բնակարանի շուկայական արժեքը, եկամուտների կապիտալիզացիայի մեթոդի կիրառմամբ գնահատման կատարման ժամանակահատվածի դրությամբ կազմում է՝

V= I/R = 1 813 815/ 0,06592 = 27 515 398 ՀՀ դրամ:

<u>Ստացված տվյալների համադրում</u>

Գույքի գնահատման ընթացքում գնահատողի կողմից կիրառվել են շուկայական արժեքի գնահատման այս դեպքում բոլոր հնարավոր մեթոդները: Ստորև բերված աղյուսակում

Գնահատող

ներկայացված են գնահատման արդյունքները և կշռային գործակիցները, կախված գնահատման մեթոդից։

ՀՀ	Հաշվարկի մոտեցում	Արժեքն ըստ կիրառված մեթոդների	Բաժնեմասը վերջնական արժեքում %	Արժեքը ՀՀ դրամով
1.	Ծախսային մոտեցում			
2.	Համեմատական մոտեցում	25 900 000	50	26 707 699
3.	Եկամուտների մոտեցում	27 515 398	50	

ՀՀ քաղաք Երևան, Շենգավիթ Վերին Շենգավիթ 2 փողոց 20/1 շենք 43 հասցեում գտնվող բնակարանի շուկայական արժեքը, տեղազննության կատարման ժամանակահատվածում ունեցած ապրանքային վիճակում, գնահատվում է 26 707 699 դրամ, ընդունվում է՝ **26 700 000 (քսանվեց միլիոն յոթ հարյուր հազար) ՀՀ դրամ:**

16. Եզրակացություն գնահատման առարկայի շուկայական արժեքի վերաբերյալ

Գնահատման ներկայացված.

ՀՀ քաղաք Երևան, Շենգավիթ Վերին Շենգավիթ 2 փողոց 20/1 շենք 43 հասցեում գտնվող բնակարանի շուկայական արժեքը, տեղազննության կատարման ժամանակահատվածում ունեցած ապրանքային վիճակում գնահատվում **26 700 000 (քսանվեց միլիոն յոթ հարյուր հազար) ՀՀ դրամ:**

Գնահատող

17. Սահմանափակումներ և հատուկ պայմաններ

Այս սահմանափակումները և պայմանները հանդիսանում են սույն հաշվետվության անքակտելի մասը:

- Գնահատողը պատասխանատվություն չի կրում գնահատվող սեփականության իրավունքների իրավական նկարագրության կամ սեփականության իրավունքների հետ առնչվող այլ հարցերի համար: Պատվիրատուի կողմից ներկայացված իրավունքները հաստատող փաստաթղթերը համարվել են հավաստի:
- Գնահատողը պարտավորվում է պահպանել գնահատման ընթացքում պատվիրատուի կողմից ստացված կամ հաշվարկների միջոցով պարզաբանված ինֆորմացիայի գաղտնիությունը:
- Գնահատողը գործել է որպես անկախ կատարող:
- Գնահատողի կողմից կատարված ուսումնասիրությունները և եզրակացությունները ամբողջությամբ անկանխակալ են:
- Աշխատանքների վարձատրությունը կախված չէ գնահատման արդյունքի և եզրակացության հետ:
- Գնահատողի կարծիքը գույքի արժեքի վերաբերյալ ուժի մեջ է գնահատման ամսաթվի դրությամբ: Գնահատողը պատասխանատվություն չի կրում գույքի արժեքի հետագա կտրուկ փոփոխությունների համար, որոնք կարող են ի հայտ գալ այդ ամսաթվից հետո, սոցիալական, տնտեսական, ֆիզիկական գործոնների, նաև քաղաքացիական օրենսդրության փոփոխության հետևանքով:
- Գնահատողից չի պահանջվում ներկայանալ դատական ատյաններին և տալ բացատրություն գնահատման վերաբերյալ, բացառությամբ դատական ատյանի օրինական հրավերով :
- Գնահատողը պատասխանատվություն չի կրում գույքի այն թերությունների համար, որոնք հնարավոր չէ հայտնաբերել տեսողական զննությամբ:
- Գնահատողը պատասխանատվություն չի կրում Պատվիրատուի կողմից ներկայացված տվյալների իսկության համար:
- Ելակետային պայմանները, որոնք օգտագործվել են հաշվետվության մեջ ստացվել են հավաստի աղբյուրներից, բայց և այնպես Գնահատողը չի կարող տալ հարյուր տոկոսանոց երաշխիք:
- Կազմված հաշվետվությունը դա մասնագետ Գնահատողի կարծիք է գույքի հավանական արժեքի վերաբերյալ և չի հանդիսանում երաշխիք, որ գույքը ազատ շուկայում կվաճառվի սույն հաշվետվության մեջ արտածված գնով:
- Գնահատողը պատրաստ է վերանայել գնահատման արդյունքներում լրացուցիչ որոշիչ տվյալներ ի հայտ գալու դեպքում, գնահատումից հետո մեկ ամսյա ժամկետում :

Գնահատող

18. Օգտագործված գրականություն

1. ՀՀ օրենքը «Անշարժ գույքի գնահատման գործունեության մասին», ընդունված 10.12.2021թ:

2. ՀՀ կառավարության 2022 թվականի օգոստոսի 24-ի թիվ 1355-Ն որոշմամբ հաստատված անշարժ գույքի գնահատման ստանդարտ:

3. ՀՀ քաղաքաշինության նախարարի կողմից 14.01.2008թ. թիվ N 09-Ն «ՀՀ տարածքում կառուցվող շենքերի, կառուցվածքների և շինարարական աշխատանքների տեսակների արժեքի խոշորացված ցուցանիշների ժողովածուն հաստատելու մասին» հրամանը, գրանցված ՀՀ արդարադատության նախարարության կողմից 07.04.2008թ., պետական գրանցման թիվ 11708117 (այսուհետ՝ ՇԱԽՑ 2009):

4. ՀՀ քաղաքաշինության նախարարի 08.12.2009թ., N 282-Ն հրամանով հաստատված «Բնակելի, հասարակական, և արտադրական շենքերի տեխնիկական վիճակի հետազննության մեթոդական ցուցումներ»-ի 118 կետի աղյուսակ 2):

5. ՀՀ քաղաքաշինության նախարարի 15.02.2008թ. N 19-Ն «Քաղաքաշինական փաստաթղթերի (ծրագրային և ճարտարապետաշինարարական) մշակման աշխատանքների արժեքի հաշվարկման կարգը հաստատելու մասին» հրաման:

6. ՀՀ քաղաքաշինության նախարարություն, 21.08.2001թ., թիվ 69 «Շինարարության համար կառուցվող ժամանակավոր շենքերի և կառուցվածքների նախահաշվային նորմերի հաստատման մասին» հրաման:

7. ՀՀ քաղաքաշինության նախարարություն, 21.08.2001թ., թիվ 68 «Շինարարական աշխատանքների վրա կլիմայական պայմանների ազդցությունը հաշվի առնող նախահաշվային նորմերի հաստատման մասին» հրաման:

ԳՆԱՀԱՏՈՂ՝ **Դ. Խաչատուրյան**

(Վկայական No ԳԳ-2023-52)